ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«16» հունիսի 2026թ. No 3477-Ա

«ՃՇԳՐԻՏ ԻՆՏԵՐՎԵՆՑԻԱ.ԵՐԲ ԿԱԹԵՏԵՐԸ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ Է ԴԱՆԱԿԻՆ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով Առողջապահության նախարարի 2019 թվականի ապրիլի 26-ի թիվ 20-Ն հրամանի հավելված 1-ի 15-րդ կետը, ինչպես նաև հաշվի առնելով «Գլոբալ Մեդ» ՍՊԸ տնօրեն Արուսյակ Բաղդյանի 29.05.2026թ. հայտը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ  Ե Մ՝

1. Հաստատել 2026 թվականից կրկնողաբար առցանց («Զում» հարթակ) «Գլոբալ Մեդ» ՍՊԸ կողմից կազմակերպվող «Ճշգրիտ ինտերվենցիա.երբ կաթետերը փոխարինում է դանակին» թեմայով դասընթացի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. «Ճշգրիտ ինտերվենցիա. երբ կաթետերը փոխարինում է դանակին» թեմայով դասընթացի՝

1) մասնակիցներին շնորհել ՇՄԶ 27 տեսական կրեդիտ.

2) դասավանդողներ Տիգրան Պողոսյանին՝ ՇՄԶ 24 տեսական կրեդիտ, Մարինե Չիվչյանին՝ ՇՄԶ 3 տեսական կրեդիտ:

3. Առողջապահության նախարարության քարտուղարության պետ Աստղիկ Առաքելյանին՝ եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը հայտատուին:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում՝ վարչական կարգով կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում՝ դատական կարգով:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

16.06.2026

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Հավելված
ՀՀ առողջապահության նախարարի
« 16 » հունիս 2026թ.
N 3477 - Ա հրամանի

# ԾՐԱԳԻՐ

## «ՃՇԳՐԻՏ ԻՆՏԵՐՎԵՆՑԻԱՆԵՐԸ ԿԱԹԵՏԵՐԸ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ Է ԴԱՆԱԿԻՆ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ

2026թ.-ից կրկնողաբար, առցանց («Զում» հարթակ)

«Գլոբալ Մեդ» ՍՊԸ

| | | |
|---|---|---|
| **Օր 1** | | |
| 3 ժամ | **Դասախոսություն**<br>Զարկերակային հիպերտենզիա<br>• Տարածվածությունը<br>• Ռիսկի գործոններ<br>• Կանխարգելում<br>• Բուժական մոտեցումներ | Տիգրան Պողոսյան |
| **Օր 2** | | |
| 3 ժամ | **Դասախոսություն**<br>Կորոնար ինտերվենցիաներ<br>• Ի՞նչ է իրենից ներկայացնում կորոնարոգրաֆիան, ինչպե՞ս է իրականացվում<br>• Կորոնարոգրաֆիայի ժամանակ անոթային մուտքի ընտրությունը<br>• Ո՞ր դեպքում է ցուցված կորոնարոգրաֆիան<br>Արդյո՞ք անվտանգ է կորոնարոգրաֆիան պացիենտի համար և ի՞նչ ռիսկեր է պարունակում | Տիգրան Պողոսյան |
| **Օր 3** | | |
| 3 ժամ | **Դասախոսություն**<br>• Ո՞ր դեպքում իրականացնել կորոնարոգրաֆիա, իսկ ո՞ր դեպքում կատարել ԿՏ կորոնարոգրաֆիա<br>• Կլինիկական դեպքեր, որտեղ կներկայացվի կորոնար անոթների անատոմիան և կորոնար ստենտավորման ընթացքը<br>• Կորոնար ստենտավորումներ, ստենտերի տեսակները, ստենտավորման տակտիկայի ընտրություն<br>• Ո՞ր դեպքերում ենք պացիենտին ուղղորդում ԱԿՇ | Տիգրան Պողոսյան |

| | | |
|---|---|---|
| | վիրահատության | |
| **Օր 4** | | |
| 3 ժամ | **Դասախոսություն**<br>Անոթային մուտքերի ապահովում<br>• Ամբողջ աշխարհում բուժական գործընթացում շատ կարևոր է անոթային մուտքերի գրագետ ապահովումը<br>• Պերիֆերիկ երակային կաթետերներ<br>• Կենտրոնական երակային կաթետերներ | Տիգրան Պողոսյան |
| **Օր 5** | | |
| 3 ժամ | **Դասախոսություն**<br>• Միդլայն կաթետերներ<br>• Պիկ կաթետեր<br>• Թունելային կաթետերներ<br>• Պորտակաթ<br>• Խնամքը<br>• Տեղադրման ընթացքը<br>• Բարդությունների կլինիկական դեպքեր | Տիգրան Պողոսյան |
| **Օր 6** | | |
| 3 ժամ | **Դասախոսություն**<br>Արգանդային զարկերակների էմբոլիզացիա որպես արգանդի միոմայի բուժման ալտերնատիվ, օրգանապահպան մեթոդ<br>• Արգանդի միոմայի տարածվածությունը<br>• Բուժման տեսակները | Տիգրան Պողոսյան |
| **Օր 7** | | |
| 3 ժամ | **Դասախոսություն**<br>• Ինտերվենցիոն ռադիոլոգիական մոտեցումները որպես արգանդի միոմայի բուժման ալտերնատիվ մեթոդ<br>• Ի՞նչ է արգանդային զարկերակների էմբոլիզացիան | Տիգրան Պողոսյան |
| **Օր 8** | | |
| 3 ժամ | **Դասախոսություն**<br>• Ինչպե՞ս է կատարվում<br>• Կատարման ընթացքը<br>• Բարդությունները<br>• Ցուցումները և հակացուցումները<br>Կլինիկական դեպքերի ներկայացում | Տիգրան Պողոսյան |

| Օր 9 | | |
|---|---|---|
| 3 ժամ | **Դասախոսություն**<br>• Զարկերակային գերճնշման ժամանակ էխոկարդիոգրաֆիկ փոփոխությունները<br>• Կլինիկական դեպքեր | Մարինե Չիվչյան |

Թիրախային լսարան՝ սրտաբաններ,նյարդաբաններ, թերապևտներ, ընտանեկան բժիշկներ, անոթաբաններ, անոթային վիրաբույժներ, մանկաբարձ-գինեկոլոգներ, ուռուցքաբաններ, անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգներ, անհետաձգելի օգնության բժիշկներ, ընդհանուր վիրաբույժներ:

Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ մինչև 50 հոգի: